



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ

ԼՐԱՏՈՒ

COUNCIL OF EUROPE
INFORMATION OFFICE IN ARMENIA

NEWSLETTER



գարն
2010
SPRING

Nº 13



COUNCIL
OF EUROPE
CONSEIL
DE L'EUROPE

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար
Տորբյորն Յագլանդ.
Ինտերնետ՝ ժողովրդի՝ կողմից, ժողովրդի՝
համար, ժողովրդի՝ հետ

2

3

Thorbjørn Jagland
Secretary General of the Council of Europe
An Internet by the people, for the people,
with the people!

Մամուլի ազատության
պաշտպանությունը Հայաստանում,
Ադրբեջանում, Վրաստանում,
Մոլդովայում և Ուկրաինայում .
համաժողով Թբիլիսիում

6

7

Safeguarding media freedom in Armenia,
Azerbaijan, Georgia, Moldova and Ukraine
– Conference in Tbilisi

Եվրոպայի խորհրդի կոնվենցիան
պաշտոնական փաստաթղթերի
հասանելիության մասին

10

11

Council of Europe Convention on
Access to Official Documents

Մարդու իրավունքների Եվրոպական
կոնվենցիայի 60-ամյակը

32

60th Anniversary of the European
Convention on Human Rights

Եվրոպիկ 2010 համաժողով, Մադրիդ,
2010թ. ապրիլի 29-30-ը

34

35

EuroDIG 2010 Conference, Madrid, 29-
30 April, 2010

Եվրոպական միության միացումը
Մարդու իրավունքների եվրոպական
կոնվենցիային

40

42

The European Union's accession to the
European Convention on Human Rights

Եվրոպացի փորձագետներ. կեղծ
դեղամիջոցներն ավելի եկամտաբեր են,
քան հերոինի առևտուրը

44

45

European experts: Counterfeit medicines
are more lucrative than heroin trade

Մարդու իրավունքները եւ ինտերնետը

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Տոբյորն Յագլանդ.

Ինտերնետ՝ ժողովրդի՝ կողմից, ժողովրդի՝ համար, ժողովրդի՝ հետ

Վերջերս Չինաստանում Նախագահ Բարակ Օբաման ասաց, որ ինտերնետում հրապարակված քննադատությունը նրան ավելի լավ նախագահ է դարձրել: Կասկած չկա, որ ինտերնետը որոշումներ կայացնողներին դարձնում է առավել թափանցիկ և պատասխանատու:

Ֆինլանդիայում ընդունված մի նոր օրենք քաղաքացիներին լայնաժապավեն ինտերնետի մատչելիության իրավունք է տալիս: Եվրոպական միությունում հեռահաղորդակցության փաթեթի վերաբերյալ քննարկումների արդյունքում որոշում կայացվեց, որ օգտագործողների ինտերնետի հասանելիությունը կարող է սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է և համաչափ, միայն արդար և անկողմնակալ գործընթացի միջոցով՝ ներառյալ խնդրի վերաբերյալ օգտագործողի կարծիքը լսելը և դատական կարգով հարցը քննելը:

Ի՞նչ է սա նշանակում: Աշխարհում ունենալով առավել քան 1.6 միլիարդ օգտագործողներ՝ ինտերնետը դարձել է կարևոր, եթե ոչ կենսական նշանակություն ունեցող մեր ամենօրյա գործունեության համար: Այն հեղափոխել է միմյանց միջև կապ հաստատելու եղանակը՝ հատելով ժամանակի, տարածության, մշակույթի և անձնական փորձի սահմանները: Ինտերնետում մենք փոխանակում ենք գաղափարներ, ստեղծում գիտելիք և ճանաչողություն, մարտահրավերներ ենք նետում կարծրացած «ճշմարտություններին» և ստեղծում դրական փոփոխությանը ծառայող ցանցեր: Այս ամենը մեծմասամբ մասնավոր հատվածի շնորհիվ, որը ունեցավ անհրաժեշտ տեսլականը, հավատը և խիզախությունը ներդրումներ կատարել նորարարական ծառայություններում և տեխնոլոգիաներում, որոնցից շատերը մատուցվում են անվճար:

Ինտերնետի հասանելիությունը այլևս ոչ թե շռայլություն է այլ անհրաժեշտություն: Այն կարող է նոր հնարավորություններ ընձեռել աղքատության շեմից ցածր ապրող մարդկանց համար: Այն գործիք է ժողովրդավարության համար, որի միջոցով կարելի է հակադրվել ռեպրեսիվ կառավարություններին: Միլիոնավոր բնական ակրեկալիք, որ ինտերնետը պետք է լինի հասանելի, մատչելի, ապահավ, վստահելի և շարունակական:

Երիտասարդների համար ինտերնետը առաջին հերթին հնարավորություն է: Դա իրենց ձևաորման շրջանում ազատության և տնդենկատվության հիմնական աղբյուրն է: Այն չպետք է ներկայացվի որպես «մութ ու խավար» մի վայր՝ վտանգի մասին ահազանգող ցուցանակով:

Այն պահից սկսած, երբ մուտք ենք գործում ինտերնետի մայրուղին, մենք ակամա

Thorbjørn Jagland Secretary General of the Council of Europe An Internet by the people, for the people, with the people!

Recently, in China, President Barack Obama said that criticism on the Internet had made him a better president. There is no doubt that the Internet renders our decision makers more transparent and accountable than ever before.

A new law in Finland gives citizens a right to broadband Internet access, and European Union discussions on the 'Telecoms Package' have resulted in a decision that a user's internet access may be restricted, if necessary and proportionate, only after a fair and impartial procedure including a right to be heard and to judicial review.

What does this mean? With over 1.6 billion users worldwide, the Internet has become important if not vital for everyday life. It has revolutionised the way we connect with each other across boundaries of time, distance, culture, and experience. Online we share ideas, we build knowledge and understanding, we challenge conventional wisdom, and we create networks for positive change. Much of this is thanks to the private sector for having the foresight, belief and courage to invest in the development of innovative services and technologies, many of which are free of charge.

Access to the Internet is no longer a luxury but a necessity. It can empower people living below the poverty threshold. It is a tool for democracy that can counter heavy-handed governments. Millions of us now have a legitimate expectation that Internet services should be accessible, affordable, secure, reliable and ongoing.

For the younger generation, the Internet is first and foremost their opportunity. It is their primary source of freedom and information in growing-up. It must not be presented as a dark place signposted with danger and caution.

The very moment we enter the Internet highway we unwittingly leave traces of personal data for others to see and to use. When we click to accept the terms and conditions of Internet services we are often obliged to provide personal data without knowing what will happen to that data. Whether the solution will be with global privacy laws or a big red delete button on services remains to be seen. At the very least, our children, as



Մարդու իրավունքները եւ ինտերնետը

այնտեղ թողնում ենք անձնական տվյալներ, որոնք կարող են տեսնել և օգտագործել ուրիշները: Երբ ընդունում ենք ինտերնետային ծառայության մատուցման պայմանները, հաճախ ստիպված ենք տրամադրել անձնական տվյալներ առանց գիտնալու, թե ինչպես կօգտագործվեն այդ տվյալները: Դեռ պարզ չէ, թե խնդիրը կլուծվի անձնական տվյալներին վերաբերող միջազգային օրենքների կամ հատուկ այդ նպատակով ստեղծարարի նոր «կոճակի» ստեղծմամբ: Առնվազն, մեր երեխաները որպես թվային դարաշրջանի սերունդ պետք է հնարավորություն ունենան վերացնել ինտերնետում թողած իրենց «հետքերը»: Ի վերջո, երեխաները նույնպես ունեն մանկություն ունենալու իրավունք, ինչպես այն ունեինք մենք՝ թվային դարաշրջան մուտք գործած «միգրանտներս», մինչև ինտերնետի հայտնվելը:

Իրենց 60 տարիների փորձառությամբ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հազարավոր վճիռներով՝ Եվրոպայի խորհրդի 47 կառավարությունները կարևոր դերակատարություն ունեն այդ թվում մեր խոսքի ազատության և անձնական կյանքը հարգելու իրավունքի՝ ներառյալ ինտերնետում, պաշտպանության առումով: Կառավարությունների և մասնավոր հատվածի հետ միասին Եվրոպայի խորհուրդը ձևավորում է Եվրոպայում և դրանից դուրս ինտերնետի քաղաքականություն՝ սահմանելով նորմեր և արժեքներ:

Ավելի պարզ ձևակերպել: Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ, այն պետք է համաձայնեցնել այլ իրավունքների հետ: Այդպես ենք մենք ընկալում խնդիրը Եվրոպայում: Ազատությունը ենթադրում է պատասխանատվություն: Այն տարածվում է մասնավոր հատվածի պատասխանատվության հարցի քննման վրա, որոնք տրամադրելով տեխնոլոգիաներ և ծառայություններ ներխուժում են և վերահսկում են շուկան այն աստիճան, որ չի մնում ոչ մի բնական այլընտրանք:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան պաշտպանում է անհատին Պետության ոտնձգություններից: Ինտերնետի դարաշրջանում, կառավարություններն ու մասնավոր հատվածը պետք է համագործակցեն ապահովելու համար, որ անհատները պաշտպանված են պետական և ոչ պետական դերակատարների ոտնձգություններից նաև ինտերնետում:

Իսկ ի՞նչ կարելի է ասել ինտերնետի գործունեությունը ապահովող ռեսուրսների կառավարման առումով: Ի՞նչ կպատահի եթե, օրինակ, որևէ կառավարություն կամ հզոր կորպորացիա որոշի անջատել, դանդաղեցնել կամ խափանել մեկ այլ երկրի ինտերնետի հասանելիությունը: Հասկացված անունների և թվերի ինտերնետային կորպորացիայի (ICANN, Internet Corporation for Assigned Names and Numbers) այսպես կոչված միջազգայնացման վերաբերյալ քննարկումները ճիշտ ուղով են ընթանում: Դեռ ավելի շատ հարցեր կան, որ պետք է քննարկել և զարգացնել:

Սակայն միայն միասնական աշխատանքի շնորհիվ է, ներառելով մասնավոր հատվածը, միջազգային համայնքը, միջազգային կազմակերպություններն ու անհատ պետությունները, հնարավոր հասնել ինտերնետում արդյունավետ պատասխանատվության, ազատության և մարդու իրավունքների պաշտպանության: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ ինտերնետը կառուցվում է ժողովրդի կողմից, ժողովրդի համար և ժողովրդի հետ միասին:

Human Rights and Internet

digital natives, should be able to remove their traces. After all, children have the right to a childhood like we, the digital immigrants, had before the Internet.

With 60 years of experience, and thousands of European Court of Human Rights judgments, the 47 governments of the Council of Europe play a crucial role in watching over inter alia our freedom of expression and our right to privacy, including on the Internet. Together with governments and the private sector, the Council of Europe is shaping Internet policy in Europe and beyond, establishing baselines and benchmarks.

Let me be clear. Freedom of expression is not an absolute right; it must be balanced with other rights. That's the way we see it in Europe. Freedom comes with responsibility. This extends to examining the responsibilities of businesses that provide technologies and services which penetrate and dominate the market so much that there is no natural alternative.

The European Convention on Human Rights protects the individual from abuses by the State. In the Internet age, governments and private sector must cooperate to make sure that individuals are protected from abuse by state and non-state actors in cyberspace too.

So what about the management of resources indispensable for the functioning of the Internet? What happens, for example, if a government or powerful corporation decides to cut off, slow down or otherwise to interfere with another country's access to the Internet? Discussions about the so-called internationalisation of the Internet Corporation for Assigned Names and Numbers (ICANN) go in the right direction. Much more needs to be discussed and worked out.

But it will only be by working together – businesses, the international community, international and multi-state organisations and individual states – that there will be effective responsibility, freedom and protection of our human rights when going online. After all, and lest we forget, the Internet our Internet is being built by the people, for the people and with the people.

Համաժողովներ

Մամուլի ազատության պաշտպանությունը Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում. համաժողով Թբիլիսիում

1950թ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված խոսքի ազատության սկզբունքը ժողովրդավարության հիմնապատկերներից մեկն է: Եվրոպայի խորհրդի բոլոր մարմինները (Նախարարների կոմիտեն, Խորհրդարանական վեհաժողովը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը) ներդրում են ունեցել Եվրոպայում ազատ և անկախ մամուլի կայացման գործում: 1981թ. փետրվարից ի վեր, Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության ներքո գործող Լրատվամիջոցների խնդիրներով ղեկավար հանձնաժողովը առաջնորդում և համակարգում է լրատվամիջոցների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի քաղաքականությունը: Մարդու իրավունքների կոնվենցիայի 10-րդ հոդվածին վերաբերող իր նախադեպային իրավունքով Եվրոպական դատարանը նախանշել է խոսքի ազատության լայն սահմանները: Տեղեկացված լինելու իրավունքը գերակա է այլ քաղաքական և տնտեսական շահերի նկատմամբ, և պետությունները պարտավոր են պաշտպանել այս հիմնարար ազատությունը՝ ժողովրդավարության հիմնաքարերից մեկը: Հիմնվելով Մարդու իրավունքների կոնվենցիայի 10-րդ հոդվածին՝ Եվրոպայի խորհուրդն ընդգծում է ինտերնետի հանրային արժեքը խոսքի ազատության և տեղեկատվության ազատ շրջանառության համար:

Համաձայն իր ուղեգծի՝ պաշտպանել մամուլի ազատությունը և նպատակ հետապնդելով ուշադրության կենտրոնում պահել ոլորտի զարգացումները, 2010թ. ապրիլի 15-ից 16-ը Թբիլիսիում (Վրաստան) Եվրոպայի խորհուրդը կազմակերպեց մամուլի խնդիրներին նվիրված համաժողով: Համաժողովի նպատակն էր խթանել Հարավային Կովկասում, Մոլդովայում և Ուկրաինայում խոսքի ազատության արդյունավետ նրաշխիքները՝ համաձայն Եվրոպայի խորհրդի չափանիշների և հանձնարարականների:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Շվեյցարիայի նախագահության հովանու ներքո կազմակերպված միջոցառմանը ներկա էին մասնակից երկրներից վաթսուհինգ ավելի ներկայացուցիչներ: Պետական պաշտոնյաները, պատգամավորները, մամուլի աշխատակիցները և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները բանավիճեցին լրագրողների անվտանգության և պաշտպանության, խոսքի ազատության մարտահրավերներ և նոր տեխնոլոգիաների ոլորտում առաջացրած փոփոխությունների շուրջ:

Վերջերս Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ նշանակված Դույնյա Միլատովիչը նույնպես բարձրաստիճան հյուրերի կազմում էր: Նա կարևորեց լրագրողների և լրատվամիջոցների ազատության պաշտպանության խնդիրը պետական և հասարակական դերակատարների հետ գործակցության միջոցով:

Հայաստանյան մասնակիցների կողմից ներկայացված խնդիրների քննարկումները ծավալվեցին Հնուստատեսության և ռադիոյի մասին օրենքում առաջարկվող

Safeguarding media freedom in Armenia, Azerbaijan, Georgia, Moldova and Ukraine – Conference in Tbilisi

Enshrined in the 1950 European Convention on Human Rights, freedom of expression is an essential foundation of democracy. All Council of Europe bodies (the Committee of Ministers, the Parliamentary Assembly and the European Court of Human Rights) have contributed to establishment of free and independent media across Europe. Since February 1981, the Steering Committee on the Mass Media, which is attached to the Directorate General of Human Rights and Legal Affairs, has been guiding and co-ordinating the Council of Europe's media policy. Through its case law on Article 10 of the Human Rights Convention, the European Court has set the broad boundaries of freedom of expression. The right to information takes precedence over any political or economic interests and states have a duty to protect this fundamental freedom, one of the cornerstones of our democracy. Drawing on Article 10 of the Convention on Human Rights, the Council of Europe underlines the public value of the Internet with regard to freedom of expression and the free circulation of information.

Consistent with its line of upholding media freedom and aiming to keep under constant attention new developments in the field, on 15-16 April 2010, the Council of Europe organised a media conference in Tbilisi (Georgia) aimed at promoting effective guarantees for freedom of expression in the South Caucasus, Moldova and Ukraine in line with Council of Europe standards and recommendations.

Organised under the aegis of the Swiss chairmanship of the Committee of Ministers of the Council of Europe, the event brought together over sixty representatives from the participating states. Public officials, parliamentarians, media professionals and representatives of NGOs debated the safety and protection of journalists, the challenges to freedom of expression and the changes in the media brought by new technologies.

Dunja Mijatovic, recently appointed OSCE Representative on Freedom of the Media, was among the distinguished speakers, who highlighted the need of protection of journalists and media freedoms in constructive cooperation with state and civil society actors.

Discussions with regard to Armenia, as presented by the Armenian participants, focused on the amendments to the Law on TV and Radio; migration to the digitalisation of TV and Radio broadcasting; freedom of expression, as well as mechanisms for protection of journalists.

The participants underlined the positive role played by the Council of Europe whose expertise and standard-setting serve as invaluable tools for harmonisation of existing



Համաժողովներ

փոփոխությունների, հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման թվայնացման, խոսքի ազատության և լրագրողների պաշտպանության խնդիրների վերաբերյալ:

Մասնակիցները նշեցին Եվրոպայի խորհրդի դրական նշանակությունը, որի փորձագիտական և չափանիշներ սահմանող գործիքները կարևոր դեր են խաղում անդամ երկրների իրավական համակարգի և պրակտիկայի ներդաշնակեցման գործում: Կազմակերպության ապագա գործունեությունը, հատկապես ոչ ինտերնետային լրատվամիջոցների (տպագիր մամուլ, հեռուստատեսություն և ռադիո) և ինտերնետային նոր լրատվամիջոցների (կայքեր, բլոգեր, ինտերնետով սփռվող ռադիո) համատեքստում արժանացավ առանձնահատուկ ուշադրության:

Համաժողովի վերահաստատեց Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող համագործակցության բազմաթիվ ծրագրերի ձեռքբերումները շարունակելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով ստացված դասերը՝ մասնակիցները համաձայնեցին մասնակից հինգ երկրներում աշխատել ապագա ծրագրերի ճանապարհային քարտեզ ստեղծելու և տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ:

Հայաստանում ԵՄ տեղեկատվական գրասենյակ

legislation and practices in the member States. Future contribution of the Organisation, especially, in the context of rising challenges faced by both off-line (print, television and radio) and on-line new media such as websites, blogs and radio over the Internet was particularly highlighted.

The main conclusions of the conference were the need to build on the achievements of numerous cooperation programmes implemented by the Council of Europe. Taking into account the lessons learned, it was agreed to aim at preparing a road map for further work in the five countries and stimulate regional co-operation.

CoE Information Office in Armenia



ԵՆ պայմանագրեր

Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք՝ թիվ 205

Եվրոպայի խորհրդի կոնվենցիան պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին

Տրոմսյո, 18 հունիսի 2009թ.

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ երկրները և սույն կոնվենցիան ստորագրած մյուս կողմերը՝

նկատի առնելով այն հանգամանքը, որ Եվրոպայի խորհրդի խնդիրն իր անդամ երկրների միջև առավել մեծ միասնության հասնելն է՝ նպատակ ունենալով ապահովել և իրականացնել իրենց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները,

նկատի ունենալով, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19 հոդվածը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի 6, 8 և 10 հոդվածները, ՄԱԿ-ի կոնվենցիան տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունմանը հանրային մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության մասին /Արիհուս, 25 հունիսի 1998թ./ և 1981թ. հունվարի 28-ի Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիան /ETS թիվ 108/,

նկատի ունենալով նաև 1982թ. ապրիլի 29-ին ընդունված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Հռչակագիրը խոսքի և տեղեկատվության ազատության մասին, ինչպես նաև Նախարարների կոմիտեի հանձնարարականներն անդամ երկրներին պետական մարմինների կողմից պահվող տեղեկատվության մատչելիության /թիվՐ /81/ 19, պետական մարմինների կողմից պահվող և երրորդ կողմին անձնական տվյալների փոխանցման /թիվՐ /91/ 10/, վիճակագրական նպատակներով հավաքված ու մշակված անձնական տվյալների պահպանության /թիվՐ /97/ 18/, արխիվների հասանելիության եվրոպական քաղաքականության /թիվՐ /2000/13 և պաշտոնական փաստաթղթերի հասանելիության /հանձնարարական /2002/2/ մասին, նկատի առնելով պետական մարմինների թափանցիկության կարևորությունը բազմակարծ և ժողովրդավարական հասարակությունում,

նկատի առնելով այն հանգամանքը, որ պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքի գործադրումը՝

1. հանրության համար տեղեկատվության աղբյուր է.
2. օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության վիճակի և պետական մարմինների վերաբերյալ.
3. նպաստում է պետական մարմինների ազնվությանը, կարողություններին,

Council of Europe Convention on Access to Official Documents

Tromsø, 18.VI.2009

Preamble

The member States of the Council of Europe and the other signatories hereto,

Considering that the aim of the Council of Europe is to achieve greater unity between its members for the purpose of safeguarding and realising the ideals and principles which are their common heritage;

Bearing in mind, in particular, Article 19 of the Universal Declaration of Human Rights, Articles 6, 8 and 10 of the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, the United Nations Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters (Aarhus, 25 June 1998) and the Convention for the Protection of Individuals with regard to Automatic Processing of Personal Data of 28 January 1981 (ETS No. 108);

Bearing in mind also the Declaration of the Committee of Ministers of the Council of Europe on the freedom of expression and information, adopted on 29 April 1982, as well as recommendations of the Committee of Ministers to member States No. R (81) 19 on the access to information held by public authorities, No. R (91) 10 on the communication to third parties of personal data held by public bodies, No. R (97) 18 concerning the protection of personal data collected and processed for statistical purposes, No. R (2000) 13 on a European policy on access to archives and Rec(2002)2 on access to official documents;

Considering the importance in a pluralistic, democratic society of transparency of public authorities;

Considering that exercise of a right to access to official documents:

- i provides a source of information for the public;
- ii helps the public to form an opinion on the state of society and on public authorities;
- iii fosters the integrity, efficiency, effectiveness and accountability of public authorities, so helping affirm their legitimacy;

Եւ պայմանագրեր

արդյունավետությանը և պատասխանատվությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեզվաիրական հաստատմանը,

ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտոնական բոլոր փաստաթղթերը սկզբունքորեն ունեն հանրային բնույթ և կարող են գաղտնի պահվել միայն մյուսների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունից ելնելով՝

համաձայնեցին հետևյալի շուրջ՝

Բաժին 1

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կոնվենցիայում ամրագրված սկզբունքները պետք է հասկացվեն առանց պաշտոնական փաստաթղթերի հասանելիության առավել լայն իրավունքի մասին երկրների օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և միջազգային պայմանագրերին վնասելու:
2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝

ա. 1/ «պետական մարմիններ» նշանակում է՝

1. ազգային, տարածքային և տեղական մակարդակի կառավարություն և վարչակազմ.
2. օրենսդիր մարմիններ և դատական իշխանություններ այնքանով, որքանով դրանք ազգային օրենքների համաձայն կատարում են վարչական գործառնություններ.
3. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, այնքանով, որքանով դրանք օժտված են վարչական իշխանությամբ.

2/ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ստորագրման ժամանակ կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման իր փաստաթղթերի փառապաշտոնի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ նշել, որ «պետական մարմիններ» սահմանումը ներառում է նաև հետևյալը՝

1. օրենսդիր մարմիններ, երբ խոսք է գնում նրանց այլ գործունեության մասին.
2. դատական մարմիններ, երբ խոսք է գնում նրանց այլ գործունեության մասին.
3. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, այն չափով, որ չափով նրանք ազգային օրենսդրության համաձայն իրականացնում են հանրային գործառնություններ կամ աշխատում են հանրային ֆոնդերի հետ.

բ. »պաշտոնական փաստաթղթեր« նշանակում է որևէ ձևով գրանցված, մշակված կամ ստացված և պետական մարմինների կողմից պահվող ամբողջ տեղեկատվությունը:

Հոդված 2. Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքը

Considering, therefore, that all official documents are in principle public and can be withheld subject only to the protection of other rights and legitimate interests,

Have agreed as follows:

Section I

Article 1 – General provisions

1 The principles set out hereafter should be understood without prejudice to those domestic laws and regulations and to international treaties which recognise a wider right of access to official documents.

2 For the purposes of this Convention:

a i “public authorities” means:

- 1 government and administration at national, regional and local level;
- 2 legislative bodies and judicial authorities insofar as they perform administrative functions according to national law;
- 3 natural or legal persons insofar as they exercise administrative authority.

ii Each Party may, at the time of signature or when depositing its instrument of ratification, acceptance, approval or accession, by a declaration addressed to the Secretary General of the Council of Europe, declare that the definition of “public authorities” also includes one or more of the following:

- 1 legislative bodies as regards their other activities;
- 2 judicial authorities as regards their other activities;
- 3 natural or legal persons insofar as they perform public functions or operate with public funds, according to national law.

b “official documents” means all information recorded in any form, drawn up or received and held by public authorities.

Եւ պայմանագրեր

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է նրա լիազորված անձինքն իրավունքը՝ հարցման հիման վրա ստանալ պետական մարմինների կողմից պահվող պաշտոնական փաստաթղթեր՝ առանց որևէ հիմքով խտրականության.
2. Կողմերից յուրաքանչյուրն իր օրենսդրությամբ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ սույն Կոնվենցիայում նկարագրված պաշտոնական փաստաթղթերի հասանելիությունն ապահովող դրույթներն իրականացնելու համար.
3. այդ միջոցները ձեռնարկվում են ամենաուշը տվյալ Կողմի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ժամանակ:

Հոդված 3. Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության հնարավոր սահմանափակումները

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է սահմանափակել պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքը: Սահմանափակումները պետք է հստակորեն ամրագրվեն օրենքում, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում և համաչափ լինեն պաշտպանելու համար՝

ա. ազգային անվտանգությունը, պաշտպանությունը և միջազգային հարաբերությունները.

բ. հանրային անվտանգությունը.

գ. հանցավոր գործունեության կանխարգելումը, քննությունը և դատական կարգով հետապնդումը.

դ. կարգապահական քննությունը.

ե. պետական մարմինների կողմից կատարվող ստուգումները, հսկողությունը և վերահսկողությունը.

զ. մասնավոր կյանքի գաղտնիությունը և այլ օրինական մասնավոր շահեր.

է. առևտրային ու տնտեսական այլ շահեր.

ը. պետության տնտեսական, դրամական և արտադրության փոխանակման կուրսի քաղաքականությունը.

թ. կողմերի հավասարությունը դատավարության ընթացքում և արդարադատության արդյունավետ իրականացումը.

ժ. շրջակա միջավայրը կամ.

ի. որևէ հարցի ուսումնասիրությանը վերաբերող քննարկումներ պետական մարմինների ներսում կամ նրանց միջև:

Article 2 – Right of access to official documents

1 Each Party shall guarantee the right of everyone, without discrimination on any ground, to have access, on request, to official documents held by public authorities.

2 Each Party shall take the necessary measures in its domestic law to give effect to the provisions for access to official documents set out in this Convention.

3 These measures shall be taken at the latest at the time of entry into force of this Convention in respect of that Party.

Article 3 – Possible limitations to access to official documents

1 Each Party may limit the right of access to official documents. Limitations shall be set down precisely in law, be necessary in a democratic society and be proportionate to the aim of protecting:

- a national security, defence and international relations;
- b public safety;
- c the prevention, investigation and prosecution of criminal activities;
- d disciplinary investigations;
- e inspection, control and supervision by public authorities;
- f privacy and other legitimate private interests;
- g commercial and other economic interests;
- h the economic, monetary and exchange rate policies of the State;
- i the equality of parties in court proceedings and the effective administration of justice;

Եւ պայմանագրեր

Շահագրգիռ պետությունները կարող են ստորագրման ժամանակ կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման իրենց փաստաթուղթն ի պահ տալիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ նշել, որ տեղեկություններն իշխող թագավորական ընտանիքի և նրա անդամների կամ պետության ղեկավարի մասին նույնպես պետք է ներառված լինեն հնարավոր սահմանափակումների մեջ:

2. Պաշտոնական փաստաթղթում պարունակվող տեղեկատվության հասանելիությունը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել 1-ին կետում նշված շահերից որևէ մեկին, այն դեպքում եթե չկա այդ տեղեկատվության հրապարակման համար գերակայող հանրային շահ:
3. Կողմերը պետք է նկատի ունենան ժամանակային սահմանափակումների հարցը, որոնցից դուրս 1-ին կետում նշված սահմանափակումներն այլևս չեն կիրառվում:

Հոդված 4. Պաշտոնական փաստաթղթեր ստանալու հարցումը

1. Պաշտոնական փաստաթղթի համար դիմողը պարտավոր չէ ներկայացնել պաշտոնական փաստաթղթեր ստանալու պատճառները:
2. Կողմերը դիմողներին կարող են իրավունք տալ անանուն մնալ, բացառությամբ այն դեպքերի, երբ ինքնության բացահայտումը կարևոր է հարցմանն ընթացք տալու համար:
3. Հարցմամբ դիմելու կարգը չպետք է գերազանցի այն, ինչ անհրաժեշտ է այդ հարցմանն ընթացք տալու համար:

Հոդված 5. Պաշտոնական փաստաթղթեր ստանալու հարցումներին ընթացք տալը

1. Պետական մարմինը հնարավորինս օգնում է դիմողին նույնականացնել պահանջվող պաշտոնական փաստաթուղթը:
2. Պաշտոնական փաստաթուղթ ստանալու հարցմանը պետք է ընթացք տրվի այդ փաստաթուղթը պահող իրավասու պետական մարմնի կողմից: Եթե պետական մարմինը չունի պահանջվող պաշտոնական փաստաթուղթը կամ եթե այն իրավասու չէ ընթացք տալ հարցմանը, հնարավորության դեպքում հարցումը կամ դիմողին ուղղորդում է իրավասու պետական մարմին:
3. Պաշտոնական փաստաթղթեր ստանալու հարցմանը ընթացք պետք է տալ հավասար հիմունքներով:
4. Պաշտոնական փաստաթղթեր ստանալու հարցմանը ընթացք պետք է տալ անմիջապես: Որոշումը հասնում, ուղարկվում և կատարվում է հնարավորինս արագ կամ նախապես սահմանված ողջամիտ ժամկետներում:
5. Պաշտոնական փաստաթուղթ ստանալու հարցումը կարող է մերժվել, եթե՝

ա. չնայած պետական մարմնի ցուցաբերած օժանդակության՝ հարցումը չափազանց անորոշ է, որպեսզի նույնականացվի պաշտոնական փաստաթուղթը

j environment; or

k the deliberations within or between public authorities concerning the examination of a matter.

Concerned States may, at the time of signature or when depositing their instrument of ratification, acceptance, approval or accession, by a declaration addressed to the Secretary General of the Council of Europe, declare that communication with the reigning Family and its Household or the Head of State shall also be included among the possible limitations.

2 Access to information contained in an official document may be refused if its disclosure would or would be likely to harm any of the interests mentioned in paragraph 1, unless there is an overriding public interest in disclosure.

3 The Parties shall consider setting time limits beyond which the limitations mentioned in paragraph 1 would no longer apply.

Article 4 – Requests for access to official documents

1 An applicant for an official document shall not be obliged to give reasons for having access to the official document.

2 Parties may give applicants the right to remain anonymous except when disclosure of identity is essential in order to process the request.

3 Formalities for requests shall not exceed what is essential in order to process the request.

Article 5 – Processing of requests for access to official documents

1 The public authority shall help the applicant, as far as reasonably possible, to identify the requested official document.

2 A request for access to an official document shall be dealt with by any public authority holding the document. If the public authority does not hold the requested official document or if it is not authorised to process that request, it shall, wherever possible, refer the application or the applicant to the competent public authority.

3 Requests for access to official documents shall be dealt with on an equal basis.

Եւ պայմանագրեր

բ. հարցումն ակնհայտորեն խնդրում է:

6. Ամբողջովին կամ մասամբ պաշտոնական փաստաթղթի հասանելիությունը մերժող պետական մարմինը պետք է ներկայացնի մերժման հիմքերը: Դիմողին իրավունք ունի իր պահանջով պետական մարմնից ստանալ մերժման գրավոր հիմնավորում:

Հոդված 6. Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության ձևերը

1. Երբ թույլատրվում է ստանալ պաշտոնական փաստաթուղթը, դիմողն իրավունք ունի ընտրել՝ ծանոթանալ բնօրինակին, թե՛ պատճենին, կամ ստանալ դրա պատճենը առկա որևէ ձևով կամ կրիչով՝ իր ընտրությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ նրա նախընտրանքը ողջամիտ չէ:
2. Եթե սահմանափակումը կիրառվում է պաշտոնական փաստաթղթում գետնված տեղեկատվության մի մասի նկատմամբ, ապա պետական մարմինը պետք է թույլատրի ստանալ փաստաթղթում առկա մնացած տեղեկատվությունը: Տեղեկատվության որևէ մասի բացթողումը պետք է հստակորեն նշվի: Այդուհանդերձ եթե փաստաթղթի մասնակի տարբերակը ապատեղեկացնող կամ անիմաստ է, կամ այն պետական մարմնի համար ակնհայտ ծանրացնող հանգամանք է, ապա այդ հարցումը կարող է մերժվել:
3. Պետական մարմինը կարող է թույլատրել ստանալ պաշտոնական փաստաթուղթ՝ դիմողին ներկայացնելով հեշտ ու մատչելի այլ ընտրանքային աղբյուրներ:

Հոդված 7. Պաշտոնական փաստաթղթեր ստանալու թույլտվության համար գանձվող գումարը

1. Պետական մարմնի շենքի ներսում պաշտոնական փաստաթղթերի գնումն անվճար է: Դա կողմերին չի խանգարում, որպեսզի վճարներ գանձվեն արխիվների ու թանգարանների կողմից տրամադրվող նմանատիպ ծառայությունների համար:
2. Դիմողից կարող է գումար գանձվել պաշտոնական փաստաթղթի պատճենի համար: Այն պետք է հիմնավորված լինի, չպետք է գերազանցի փաստաթղթի վերարտադրության և հանձնման փաստացի ծախսերը: Վճարների սակագները պետք է հրապարակվեն:

Հոդված 8. Վերանայման ընթացակարգը

1. Դիմողը, ում պաշտոնական փաստաթուղթ ստանալու հարցումը հստակ կամ ոչ հստակ կերպով մերժվել է՝ ամբողջովին կամ մասամբ, դատարանում կամ օրենքով սահմանված կարգով այլ անկախ ու անաչառ մարմնի առջև վերանայման ընթացակարգի հնարավորություն պետք է ունենա:
2. Դիմողը պետք է մշտապես ունենա շուտափույթ և ոչ թանկ վերանայման ընթացակարգի հնարավորություն՝ կամ պետական մարմնի կողմից վերաքննում կամ միտմանում 1-ին և 2-րդ փուլում:

4 A request for access to an official document shall be dealt with promptly. The decision shall be reached, communicated and executed as soon as possible or within a reasonable time limit which has been specified beforehand.

5 A request for access to an official document may be refused:

- i if, despite the assistance from the public authority, the request remains too vague to allow the official document to be identified; or
- ii if the request is manifestly unreasonable.

6 A public authority refusing access to an official document wholly or in part shall give the reasons for the refusal. The applicant has the right to receive on request a written justification from this public authority for the refusal.

Article 6 – Forms of access to official documents

1 When access to an official document is granted, the applicant has the right to choose whether to inspect the original or a copy, or to receive a copy of it in any available form or format of his or her choice unless the preference expressed is unreasonable.

2 If a limitation applies to some of the information in an official document, the public authority should nevertheless grant access to the remainder of the information it contains. Any omissions should be clearly indicated. However, if the partial version of the document is misleading or meaningless, or if it poses a manifestly unreasonable burden for the authority to release the remainder of the document, such access may be refused.

3 The public authority may give access to an official document by referring the applicant to easily accessible alternative sources.

Article 7 – Charges for access to official documents

1 Inspection of official documents on the premises of a public authority shall be free of charge. This does not prevent Parties from laying down charges for services in this respect provided by archives and museums.

2 A fee may be charged to the applicant for a copy of the official document, which should be reasonable and not exceed the actual costs of reproduction and delivery of the document. Tariffs of charges shall be published.

Եւ պայմանագրեր

Հոդված 9. Լրացուցիչ միջոցներ

Կողմերը հանրությանը պետք է տեղեկացնեն պաշտոնական փաստաթղթեր ստանալու իրավունքի և այն մասին, թե ինչպես կարող է այդ իրավունքը գործադրվել: Նրանք նաև պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որպեսզի՝

ա. պետական մարմիններին կրթեն իրենց պարտականությունների և պարտավորությունների մասին՝ նկատի ունենալով այդ իրավունքի իրականացումը.

բ. տեղեկություններ տրամադրեն այն հարցերի կամ գործունեության վերաբերյալ, որի համար իրենք պատասխանատու են.

գ. իրենց փաստաթղթերն արդյունավետ կերպով վարեն, որպեսզի դրանք հեշտությամբ հասանելի լինեն.

դ. իրենց փաստաթղթերի պահպանության և ոչնչացման համար կիրառեն հստակ և սահմանված կանոններ:

Հոդված 10. Պետական մարմինների նախաձեռնությամբ հրապարակվող փաստաթղթերը

Սեփական նախաձեռնությամբ և երբ նպատակահարմար է պետական մարմինը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ հրապարակելու այն պաշտոնական փաստաթղթերը, որոնք պահպանում է, պետական կառավարումը թափանցիկ ու արդյունավետ դարձնելու նպատակով և խրախուսելու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերում հանրության իրազեկ մասնակցությունը:

Բաժին 2

Հոդված 11. Պաշտոնական փաստաթղթերը հասանելի դարձնելու մասնագետների խումբը

1. Պաշտոնական փաստաթղթերը հասանելի դարձնելու մասնագետների խումբը նիստ է գումարում տարեկան առնվազն մեկ անգամ, որպեսզի վերահսկի Կողմերի կողմից սույն Կոնվենցիայի կատարումը, այն է՝

ա. հաշվետվություն ներկայացնելով օրենքով սահմանված և Կողմերի ձեռնարկած գործնական քայլերի համապատասխանության մասին՝ սույն Կոնվենցիայում ամրագրված դրույթներն իրականացնելու համար.

բ. 1. սույն Կոնվենցիայի կիրարկմանը վերաբերող ցանկացած հարցի շուրջ կարծիքներ հաւտննում.

Article 8 – Review procedure

1 An applicant whose request for an official document has been denied, expressly or impliedly, whether in part or in full, shall have access to a review procedure before a court or another independent and impartial body established by law.

2 An applicant shall always have access to an expeditious and inexpensive review procedure, involving either reconsideration by a public authority or review in accordance with paragraph 1.

Article 9 – Complementary measures

The Parties shall inform the public about its right of access to official documents and how that right may be exercised. They shall also take appropriate measures to:

- a educate public authorities in their duties and obligations with respect to the implementation of this right;
- b provide information on the matters or activities for which they are responsible;
- c manage their documents efficiently so that they are easily accessible; and
- d apply clear and established rules for the preservation and destruction of their documents.

Article 10 – Documents made public at the initiative of the public authorities

At its own initiative and where appropriate, a public authority shall take the necessary measures to make public official documents which it holds in the interest of promoting the transparency and efficiency of public administration and to encourage informed participation by the public in matters of general interest.

Section II

Article 11 – Group of Specialists on Access to Official Documents

1 A Group of Specialists on Access to Official Documents shall meet at least once a year with a view to monitoring the implementation of this Convention by the Parties,

Եւ պայմանագրեր

- առաջարկություններ ներկայացնելով սույն Կոնվենցիայի արդյունավետ օգտագործումն ու իրականացումը դյուրացնելու կամ բարելավելու նպատակով, այդ թվում՝ որևէ հիմնախնդրի նույնականացում.
- իրավական, քաղաքականությանը կամ տեխնոլոգիական կարևոր զարգացումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում և հաշվետվություն.
- սույն Կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Կողմերի խորհրդատվական մարմինն առաջարկություններ ներկայացնելով.
- 19 հոդվածի համաձայն իր կարծիքը հայտնելով սույն Կոնվենցիայում փոփոխություններ կատարելու առաջարկությունների վերաբերյալ:

2. Մասնագետների խումբը կարող է տեղեկատվություն և տեսակետներ խնդրել քաղաքացիական հասարակությունից:

- Մասնագետների խումբը կազմված է նվազագույնը տասը, առավելագույնը՝ տասնհինգ հոգուց: Անդամներն ընտրվում են չորս տարով՝ Կողմերի խորհրդատվական մարմնի կողմից: Այդ կազմը թարմացվում է մեկ անգամ փորձագետների ցուցակի միջից: Կողմերից յուրաքանչյուրն առաջարկում է երկու փորձագետի թեկնածություն: Նրանք ընտրվում են պաշտոնական փաստաթղթերի հասանելիության ոլորտում իրենց գիտակության շնորհիվ և ամենաազնիվ մարդկանց միջից: Կողմերից յուրաքանչյուրի առաջարկած ցուցակից կարող է ընտրվել առավելագույնը մեկ հոգի:
- Մասնագետների խմբի անդամները մասնակցում են որպես անհատներ, անկախ ու անաչառ են իրենց գործառնությունում և կառավարություններից որևէ ցուցում չեն ստանում:
- Մասնագետների խմբի անդամների ընտրության կարգը որոշվում է Նախարարների կոմիտեի կողմից Կոնվենցիայի Կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միահամուռ համաձայնությունը ստանալուց հետո՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Մասնագետների խումբը հաստատում է իր սեփական կանոնակարգը:

Հոդված 12. Կողմերի խորհրդատվական խումբը

- Կողմերի խորհրդատվական խումբը կազմված է Կողմերից յուրաքանչյուրի մեկական ներկայացուցչից:
- Կողմերի խորհրդատվական խումբը նիստ է գումարում հետևյալ նպատակով՝

ա. քննարկելու մասնագետների խմբի ներկայացրած զեկույցները, կարծիքներն ու առաջարկությունները.

բ. առաջարկություններ և հանձնարարականներ ներկայացնելու Կողմերին.

գ. սույն Կոնվենցիայի 19 հոդվածի համաձայն փոփոխություններ կատարելու առաջարկություններ ներկայացնելով.

դ. 19 հոդվածի համաձայն առաջարկություններ ձևակերպելու սույն Կոնվենցիայում

notably:

- a reporting on the adequacy of the measures in law and practice taken by the Parties to give effect to the provisions set out in this Convention;
- b i expressing opinions on any question concerning the application of this Convention;
- ii making proposals to facilitate or improve the effective use and implementation of this Convention, including the identification of any problems;
- iii exchanging information and reporting on significant legal, policy or technological developments;
- iv making proposals to the Consultation of Parties for the amendment of this Convention;
- v formulating its opinion on any proposal for the amendment of this Convention made in accordance with Article 19.

2 The Group of Specialists may request information and opinions from civil society.

3 The Group of Specialists shall consist of a minimum of 10 and a maximum of 15 members. The members are elected by the Consultation of Parties for a period of four years, renewable once, from a list of experts, each Party proposing two experts. They shall be chosen from among persons of the highest integrity recognised for their competence in the field of access to official documents. A maximum of one member may be elected from the list proposed by each Party.

4 The members of the Group of Specialists shall sit in their individual capacity, be independent and impartial in the exercise of their functions and shall not receive any instructions from governments.

5 The election procedure of the members of the Group of Specialists shall be determined by the Committee of Ministers, after consulting with and obtaining the unanimous consent of the Parties to the Convention, within a period of one year following the entry into force of this Convention. The Group of Specialists shall adopt its own rules of procedure.

Article 12 – Consultation of the Parties

1 The Consultation of the Parties shall be composed of one representative per Party.

2 The Consultation of the Parties shall take place with a view to:

- a considering the reports, opinions and proposals of the Group of Specialists;
- b making proposals and recommendations to the Parties;
- c making proposals for the amendment of this Convention in accordance with

Article 19;

Եւ պայմանագրեր

փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

3. Կողմերի խորհրդատվական խումբը գումարվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, որպեսզի ընտրվեն մասնագետների խմբի անդամները: Այնուհետև այն նիստ է գումարում առնվազն յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ և այն դեպքում, երբ Կողմերի մեծ մասը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կամ Գլխավոր քարտուղարը պահանջում են դա: Կողմերի խորհրդատվական խումբը հաստատում է իր սեփական կանոնակարգը:
4. Յուրաքանչյուր նիստից հետո Կողմերի խորհրդատվական խումբը Նախարարների կոմիտեն հաշվետվություն է ներկայացնում գործունեության վերաբերյալ:

Հոդված 13. Քարտուղարությունը

Սույն բաժնում նկարագրված գործառնություններն իրականացնելիս Կողմերի խորհրդատվական և մասնագետների խմբերն աջակցություն են ստանում Եվրոպայի խորհրդի քարտուղարությունից:

Հոդված 14. Հաշվետվությունը

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո պայմանավորվող կողմը մեկ տարվա ընթացքում մասնագետների խմբին է ներկայացնում զեկույց, որը լիարժեք տեղեկատվություն է պարունակում սույն Կոնվենցիայի դրույթներն իրականացնելու նպատակով ձեռնարկված օրենսդրական և այլ միջոցների վերաբերյալ:
2. Դրանից հետո յուրաքանչյուր կողմ մինչ Կողմերի խորհրդատվական խմբի նիստը մասնագետների խմբին է ներկայացնում 1-ին կետում նշված թարմացված տեղեկատվություն:
3. Յուրաքանչյուր կողմ մասնագետների խմբին է ներկայացնում իր առաջադրանքները կատարելու համար վերջինիս պահանջած տեղեկատվությունը:

Հոդված 15. Հրապարակումը

Մասնագետների խմբին ներկայացրած Կողմերի հաշվետվությունները, մասնագետների խմբի զեկույցները, առաջարկություններն ու կարծիքները և Կողմերի խորհրդատվական խմբի հաշվետվությունները հրապարակվում են:

d – formulating its opinion on any proposal for the amendment of this Convention made in accordance with Article 19.

